

ՕԳՈՍՏՈՍ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	10
1.5. Էներգահամակարգ	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ	11
2. Առևտրային տնօրինություն	12
2.1. Բաժանորդների տվյալներ	13
2.2. Հասույթ	13
2.3. Գանձում	14
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	15
2.5. Ջրաչափեր	16
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	17
3. Տեխնիկական տնօրինություն	18
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	19
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	20
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	22
3.4. Ջրատար համակարգի բարելավում	23
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	25
3.6. 1-85 թեժ գիծ	27
4. Լրատվական ծառայություն	28
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	31
5.1. Դասընթացներ/սեմինարներ	32
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	33
5.3. Քլորի տարողությունների ճնշափորձարկում, վկայագրման և ներկման աշխատանքներ	34
5.4. Բժշկական զննություններ և հետազոտություններ	34
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	35
6.1. Համակարգչային ցանց	36
6.2. Բնտերակտիվ համակարգ	36

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Արմավիրի մարզ



● «Արմավիր» տեղամասի Բաղրամյան խոշորացված համայնքի Արտամետ գյուղը սնող $d=250$ մմ, $L=1100$ զմ ջրագիծը գտնվում էր խիստ վթարային վիճակում (ս.թ. նշված ջրագծի վրա արդեն իսկ տեղի էր ունեցել թվով 16 վթար, որից մի մասը գաղտնի), որն աշխատակիցների և Բաղրամյան խոշորացված համայնքի համատեղ ուժերով փոխարինվել է $d=160$ մմ պոլիէթիլենային խողովակով: Ջրագծի փոխարինման արդյունքում տնտեսվել է մոտ 2լ/վ ջուր, կտրուկ նվազել է ավելցուկային ճնշումը, կրճատվել են նաև ջրագծի շահագործման ծախսերը:

Սյունիքի մարզ

● «Գորիս» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Գորիս, Սարգսյան փողոցի վերջնամասում կառուցվել է նոր ջրագիծ $d=90$ մմ $L=68$ զմ, տեղադրվել է թվով 3 ջրաչափական սարք:



● «Միսիան» տեղամասի կողմից ք.Միսիան, Շիրակ թաղամասում կառուցվել է $d=32-50$ մմ $L=476$ զմ ջրագիծ, ինչպես նաև Միսիան քաղաքի անտառտնտեսության տարածքում փոխարինվել է վթարված $d=530$ մմ ջրագծի $L=70$ զմ հատվածը $d=426$ մմ մետաղական խողովակներով:

Վայոց ձորի մարզ

● «Եղեգնաձոր» տեղամասի կողմից ք.Եղեգնաձոր, Մումիկի 2 բ/բ շենքի բակային հատվածում փոխարինվել են $d=63$ մմ $L=60$ զմ, $d=50$ մմ $L=25$ զմ և $d=32$ մմ $L=12$ զմ ջրագծերը՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ:



Գեղարքունիքի մարզ

● «Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից Ազատության փողոցում կառուցվել է $d=600$ մ ջրագիծ, սահմանագատման կետում տեղադրվել է թվով 6 ջրաչափական սարքեր:



Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝



Նոր Նորք վարչական շրջան



● Նոր Նորք 9-րդ զանգված Այգեգործական թաղամասով անցնող $d=110$ մ վթարված պոլիէթիլենային ջրագիծը «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից ներթափանցման միջոցով փոխարինվել է $d=63$ մ $L=65$ մետր պոլիէթիլենային խողովակներով: Իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 1,5 լ/վ ջրաքանակ:

● Նոր Նորք 1-ին զանգված, Նանսենի փողոց 21/1 հասցեում «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=63$ մ $L=50$ մետր պոլիէթիլենային ջրագիծ, տեղադրվել է $d=50$ մ փական: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=200$ մ $L=140$ մետր թուջե ջրագիծ, բացառվել են ապօրինի միացումները, խնայվել է մոտ 2լ/վրկ ջրաքանակ:



Նուբարաշեն վարչական շրջան

● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից Նուբարաշեն թաղամասի «Հոգեկան Առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ տարածքում գտնվող $d=100$ մ ջրաչափը տեղափոխվել է տարածքից դուրս սահմանագատման կետում գտնվող դիտահորում: Կառուցվել է $d=90$ մ $L=23$ մետր պոլիէթիլենային և $d=89$ մ $L=6$ մետր պողպատե խողովակներով ջրագիծ, տեղադրվել է $d=80$ մ փական: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=100$ մ $L=29$ մետր պողպատե ջրագիծը, բացառվել են ապօրինի միացումները, տնտեսվել է մոտ 8լ/վրկ ջրաքանակ:

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 1-ում ներկայացված է օգոստոս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:


Աղյուսակ 1. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	285	6	0	0	0	0	0	0	0	291
Փոխարինված	219	6	3	1	2	4	0	0	0	235
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	269	9	8	3	1	1	1	0	0	292
Ընդամենը	773	21	11	4	3	5	1	0	0	818

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 818 ջրաչափ: Կատարված աշխատանքների 94 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Բելյուրի փողոցում գտնվող D=200մմ կերամիկական կոյուղագիծը պարբերաբար խցանվում էր անհամապատասխան թեքությունների պատճառով, տեղ-տեղ կոտրված էր և շահագործման համար ոչ պիտանի: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է D=200մմ L=12մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, որի արդյունքում կոյուղագիծը ներկայումս գործում է անխափան:



Մյունիքի մարզ

● «Գորիս» տեղամասի կողմից ք.Գորիս, Արևշատ 1-ին փողոցում կոյուղատար համակարգի վրա փոխարինվել է թվով 1 կոտրված դիտահորի ծածկ:



Գեղարքունիքի մարզ

● «Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են կոյուղագծերի վերակառուցման աշխատանքներ Ագատության փողոցում փոխարինվել է պոլիէթիլային d=200մմ L=36գծմ, Զոր.Անդրանիկի փողոցում՝ d=150մմ L=50գծմ, ինչպես նաև Զոր.Անդրանիկ փողոցում վերանորոգվել են թվով 3 դիտահորեր, Միքայելայն փողոց, Միքայելյան փողոց 5 և Ղամարյան 7 հասցեներում տեղադրվել են դիտահորերի ծածկեր, կատարվել է մակերեսի բետոնացում:



● «Մևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Մևան, Մայաթ-Նովա 14, 27, Նալբանդյան 33, 44 և Նաիրյան-Ռուսական փողոցների խաչմերուկ հասցեներում իրականացվել են կոյուղու դիտահորերի վերանորոգման աշխատանքներ:



Օգոստոս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2320
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	59677
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	54224
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	16780
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2695.9
Կառուցված ջրագիծ	մ	6003.5
Կառուցված կոյուղագիծ	մ	338
Վերացված գաղտնի վթարներ	հատ	11
Փոխարինված փական	հատ	31
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	325
Մաքրված դիտահոր	հատ	278
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	16.6
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	896
Ջրահեռացման ցանցում	հատ	1239
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	939	968	936

Օգոստոս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի ըվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	228	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	222	0
3	Մաշտոց	280	252	0
4	Շահումյան	0	177	6
5	Շիրակ	1207	419	74
6	Արթիկ	300	114	15
7	Ապարան	0	28	0
8	Ալավերդի	0	17	0
9	Աշոցք	0	0	0
10	Բերդ	55	20	0
11	Իջևան	0	38	0
12	Լոռի	0	202	0
13	Նոյեմբերյան	0	14	0
14	Սպիտակ	0	18	0
15	Ստեփանավան	60	32	5
16	Թալին	0	7	0
17	Տաշիր	0	13	0
18	Չարենցավան	0	80	0
19	Աբովյան	0	93	0
20	Հրազդան	60	118	3
21	Կենտրոն	190	232	12
22	Հյուսիս	160	244	15
23	Հարավ	0	304	0
24	Էրեբունի	0	136	6
25	Արմավիր	0	82	0
26	Արտաշատ	0	92	30
27	Էջմիածին	0	120	0
28	Աշտարակ	1680	30	0
29	Արարատ	0	85	0
30	Մասիս	0	43	24
31	Գավառ	860	25	86
32	Սևան	550	103	21
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	250	10	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	90	46	12
37	Վայք	90	12	0
38	Եղեգնաձոր	90	20	0
39	Ջերմուկ	0	56	0
40	Սիսիան	190	57	0
41	Գորիս	0	43	16
42	Կապան	302	89	6
43	Մեղրի	0	22	0
	Ընդամենը	6414	3980	331

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի մանր մասնիկների ճաղավանդակները խցանվել էին, որի պատճառ էին հանդիսացել քերիչ սանրերը: Արդյունքում քերիչ սանրերը կարգաբերվեցին և այժմ սարքավորումները աշխատում են բնականոն ընթացքով: Ձննվեցին նաև ավագորսիչների հատակի հորիզոնական կոնվեյերների պոլիէթիլեն պատյանները, որի արդյունքում պարզ դարձավ որ պատյանների մաշվածությունը գտնվում է թույլատրելի սահմանում:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանի ճաղավանդակներից մեկը դադարել էր աշխատել և գննության արդյունքում պարզ էր դարձել, որ այրվել էր էլեկտրական թողարկիչը, որն էլ փոխարինվեց նորով և այժմ այն աշխատում է բնականոն ընթացքով: Կարգաբերվել էին նաև ճաղավանդակների քերիչ սանրերը:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի պոմպերի արտադրողականությունը կտրուկ ընկել էր: Արդյունքում պոմպերը դուրս բերվեցին հորից և մաքրվեցին բանվորական անիֆները, որոնք ամբողջությամբ խցանված էին: Այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	50,314	14.4
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	91,005	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	173,107	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	113,408	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,590	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,590	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	5,815	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,550	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	18,600	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,788	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը կներկայացվի սեպտեմբերի հաշվետվությունում:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար օգոստոս ամսվա ընթացքում թվով 3 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանն:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կլիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով 37 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսալուղեր:

Թվով 12 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 5 մեքենայի վրա փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիոդային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 6 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 2 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուսի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:



Նորոգվել է թվով 1 մեքենայի փոխանցման տուփը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.09.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 585,305 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. օգոստոս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	674,695	558,844	82,8
	Իրավաբանական անձ	30,922	26,461	85,6

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	735,957	599,010	81,4
	Իրավաբանական անձ	36,190	25,890	71,5

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 619 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 6164 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 08.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	3463	2076	359	5898
	Իրավաբանական անձ	145	109	12	266
	Ընդամենը	3608	2185	371	6164

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ օգոստոս ամսին փոխարինված 6164 ջրաչափերի մոտ 42 %-ը (կամ 2556 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 235,353 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Օգոստոս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,630 մլն. դրամ (89 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Օգոստոս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 344 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 37.6 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2022թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
12787	1515648365	8241	827430864	158	20991281	4441	678220701	5568	576914104

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 64 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.09.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,146	2,750
Բնակիչ-բաժանորդներ	7,278	1,820
Իրավաբանական անձեր	2,868	930

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՏՍ սպասարկման տարածքում շուրջ 347.3 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	704,242	597,510	84.84	35,094	25,874	75.73
	Առանց ջրաչափի	31,715	1,500	4.73	1,096	16	1.46

Տվյալների բազայում 01.09.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	875,779	397,877	45.43	38,889	11,363	29.22

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 7468 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1058 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2402	1971	81.9
գ.Պոռշյան	1635	1109	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5939	1888	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 12318, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 12175, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 2246, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2553, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1965, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2729 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4644 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	438	221,477	40,132,875

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հուլիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.9%, ինչը 0.3% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 114 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի օգոստոս ամսին, 2021թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 245 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 1294 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 5 855 կՎտ.ժ (1.17 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 14 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 12 918 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների, էլ. էներգիայի ծախսը կնվազեր 18 773 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 126 հասցեներում կատարվել են էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման աշխատանքներ: Կատարվել է փոխադարձ ակտերից էլ. էներգիայի ծախսերի դուրսբերում, մշակում և վերլուծություն: Թվով 3 հասցեում հայտնաբերվել է խախտում, կազմվել է արձանագրություն: «ՀԷՅ» ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 571 կՎտ.ժամ 1.7%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 45 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 31 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 374 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 252 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում վեց հասցեում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- ՝ Դրոյի 28 (Qz-31)
- ՝ Միսակյան 22 (Ma-38)
- ՝ Մամիկոնյաց 1ա (Ar-92)
- ՝ Մանթաշյան 3.5 (She-119)
- ՝ Դիլիջան Գոլովինո ՋՄԿ (Dil-2)
- ՝ Խաչատրյան 26/1 (Ar-98)

Տեղադրված գումարային 142 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ավելացել է 12,062 կՎտ.ժ կամ 4.76%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 14 խոշոր պոմպակայանում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 1 385 840 ԿՎտ/ժամ (40,98%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 258 229 ԿՎտ.ժ/ամիս կամ 8,98% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 762 701 ԿԿտ.ժ կամ 23,44 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հուլիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում	Գյուղեր և քաղաքներ	10
Թարմացված ջրագծերի տեղեկատվության համալրում	Մարզեր, գյուղեր, քաղաքներ	30
Գյուղերի ջրագծերի հիդրավիլիկական մոդելավորում	գյուղ	6
QGIS համակարգով թվային շերտերի թարմացում և բազավորում	հասցե	12000
Երևանի և մարզերի տվյալներ բազաների կառուցվածքային համապատասխանություն, դասակարգում ըստ դոմեյնի	դասակարգում	1
Վեոլիա Ջուր ընկերության ենթակայության տակ գտնվող պետական գույքի տեղադիրքների թվայնացում և բազավորում	վկայականներ	556
Վթարավերականգնողական աշխատանքների շրջանակում կատարվել է կոյուղագծերի թվայնացում	մետր	74
Երևան քաղաքի Խաղաղ Դոն փ., 19, Մարգարյան փ., 20 հասցեների վերակառուցված կոյուղագծերի մուտքագրում ԱՏ համակարգ	մուտքագրում	1
Կոյուղագծերի թվայնացում	քաղաք	5
CMDBuild ծրագրային հավելվածի մշակման նպատակով իրականացվել է համագործակցություն ծրագրավորողի հետ	համագործակցություն	1
USZ բաժնի համար անհրաժեշտ ծրագրային հավելվածների ուսումնասիրություն՝ ըստ տեխնիկական ուղեցույցների	ուսումնասիրություն	1
SCADA համակարգում առկա ջրատարների միացման կետերի տեղորոշում և թվայնացում	թվայնացում	1
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	33
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	969
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2411
Մարգային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	8498
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	15
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	93
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1771
Մարգային կոյուղու երկարությունը	կմ	1760

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հուլիս ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը

Արգնի 2 ջրատար

Ջրատարը կրկին վթարվել է սողանքների պատճառով: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, ու $Q \approx 500$ լ/վ ջրաքանակով վթարը վերացնելուց հետո ջրատարի բնականոն աշխատանքը վերականգնվել է:



Արգական-Քանաքեռ ջրատար

Ջրատարի մոտ շին. աշխատանքներ կատարելու ընթացքում շինարարի կողմից Ֆասսվել է ջրատարի վրա գտնվող $D=200$ մմ փականը: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, և փականը ապամոնտաժելուց հետո, վերականգնվել է ջրատարի աշխատանքը:

Ջերմանիս-Ուրցաձոր ջրատար

Վեդի քաղաքում ջրի սակավության խնդրի լուծման համար Ջերմանիսի աղբյուրների հարակից տարածքներում իրականացվել են նոր ջրաղբյուրների որոնման աշխատանքներ: Արդյունքում գտնվել է ջրաղբյուր, որը մեր գործող ջրատարից հեռու էր ≈ 13 կմ: Կատարված աշխատանքներից հետո ջրահավաքի, ջրատարի կառուցում, Ջերմանիսի ջրամատակարարումը բարելավվել է, իսկ ջրատարում ջրաքանակն ավելացել է $Q=7$ լ/վ:



Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Մայակովսկի փողոցում, որտեղ սուբվենցիոն ծրագրով իրականացվում է փողոցաշինական ծրագիր, «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրվել է փողոցում առկա հին ջրամատակարարման ցանցը, որի մեջ առկա էր որոշակի ջրաքանակ: Քանի որ փողոցը հիմնանորոգման փուլում է, ուստի վարչության աշխատակիցների կողմից նոր ջրամատակարարման ցանցին միացված անուցման կետը հայտնաբերելուց հետո խցափակվել է տեղամասի կողմից:



Արդյունքում շահագործումից հանվել է $D=100$ մմ, $L=160$ մ պողպատե, երկու զուգահեռ ջրագծեր, տնտեսվել է $Q=1-2$ լ/վ ջրաքանակ:

● Գյումրի քաղաքի Ղանդիյան 27 շենքի բակում Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ շենքը սնուցող ջրագծից դեպի հարակից տնակներ անցկացված է եղել $D=50$ մ պողպատե ջրագիծ, որը խցափակվել է տեղամասի կողմից: Արդյունքում շահագործումից հանվել է $D=50$ մ, $L=100$ մ պողպատե ջրագիծ, տնտեսվել է $Q = 0,5-1$ լ/վ ջրաքանակ:



● Չկալովկա գյուղի մոտակայքում իրականացվող աշխատանքների ընթացքում Հացառատ-Լճաշեն $D=500$ մ պողպատե ջրատարի վրա հայտնաբերվել է $Q=5$ լ/վ քանակությամբ վթար, սահմանազատման կետերում չգտնվող 3 անսարք ջրաչափեր, ինչպես նաև հայտնաբերվել և խցափակվել է $D 50$ մ պողպատե ապօրինի ջրագիծ:

● Քաղսի գյուղի մոտակայքում վթարաորոնողական աշխատանքների ընթացքում Հրագրան քաղաքի «Հարավ» ՕԿՁ-ից սնուցվող և դեպի մայրուղու հարևանությամբ գտնվող գումեր և սեփական տներ գնացող ջրագծի վրա մայրուղու տակ, հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=4$ լ/վ ջրաքանակ:



● Գավառ քաղաքի Կարմիր գյուղ Դեմիրճյան 16 հասցեում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար $D=160$ մ պե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:

● Սևան քաղաքի Արա Գեղեցիկ փողոցում իրականացված աշխատանքների արդյունքում տնամերձ հողամասերում հայտնաբերվել են բազմաթիվ ապօրինի միացումներ:




Քաղաք Երևան





● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Նուբարաշեն խճուղի 7 հասցեի մոտով անցնող $D=200$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q =4$ լ/վ ջրաքանակ:

● «Շահումյան» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Հաղթանակ թաղամասի սալիկների արտադրամասի տարածքով անցնող D=150մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=7լ/վ ջրաքանակ:




● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Թեյշեբահինի փողոցում՝ օդու արտադրամաս գնացող ջրագծի վրա, հայտնաբերվել են 2 հատ D=32մմ և D=20մմ ապօրինի միացումներ: Նշված միացումները խցափակելուց հետո տնտեսվել է Q=4լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Գրիգոր Զոհրապ փողոցով անցնող D=150մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=12լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Աբովյան 26 շենքի բակում՝ նախկին չգործող պոմպակայանի մեջ, հայտնաբերվել է վթար D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=2լ/վ ջրաքանակ:

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Զրվեժ գյուղի 12-րդ փողոց 8 տուն հասցեն սնող D=50մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացվել է խցափակման եղանակով միացման կետից տնտեսելով Q=15լ/վ ջրաքանակ:




3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և Խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Աշտարակում** «Արտակ» քլորակայանում հիպոքլորիդի հաբի սարքավորմանը սնուցող հում ջրի ջրագծի կառուցման նպատակով տեղադրվել է ճնշման կարգավորիչ, որը ապահովել է հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:





● **Քաղաք Աշտարակում** «Արտակ» քլորակայանում հիպոքլորիդի հաբի սարքավորման ժամանակ գնցողները փոխարինվել են նոր վերանորոգված սարքով, իսկ շարքից դուրս եկած ցիրկուլացիոն պոմպը փոխարինվել է նոր պոմպով: Արդյունքում ապահովվել է հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:

● **Քաղաք Իջևան** «Գետահովիտ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է մոնտաժվել են ժամանակակից քլորաչորի խողովակները:



● **Քաղաք Գավառ** «Կալեր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի ինժեկցիան ապահովող շարքից դուրս եկած պոմպը փոխարինվել է նոր պոմպով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● **Քաղաք Գյումրի** «Կապս» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած պղնձի խողովակը և ALLDOS փականը փոխարինվել են նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● **Քաղաք Երևան** «Ձորաղբյուր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի ALLDOS փականի շարքից դուրս եկած մանեկները փոխարինվել են նորերով:


● **Քաղաք Սպիտակ** «Ջրաշեն» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը և պղնձյա խողովակը փոխարինվել է նորով՝ ապահովելով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 42103 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12604 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9888 զանգ (78,5%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2716 զանգ (21,5%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 29499 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 20769 զանգ (70,4%), իսկ մարզերինը՝ 8730 զանգ (29,6%):
- 2021թ. օգոստոսի համեմատ՝ 2022թ. օգոստոս ամսին 7,37%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 2,32%-ով:
- 2021թ. օգոստոսի համեմատ՝ 2022թ. օգոստոս ամսին 68 %-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը և 1%-ով նվազել է 5 բուսպեից ավել զանգերի քանակը: 197 %-ով ավելացել է հայտարարությունների լուսմը ավտոմատ ծառայության միջոցով, ինչն էլ վկայում է այն մասին, որ բաժանորդները ջրագրկման մասին տեղեկատվությանը փորձում են ծանոթանալ լսելով ջրագրկումներ բաժնում տեղադրված ձայնագրությունը, և ստանալով համապատասխան տեղեկատվություն՝ այլևս չմիանալով օպերատորին
- 2021թ. օգոստոսի համեմատ՝ 2022թ. օգոստոս ամսին 15.01%-ով նվազել են ջրամատակարարման բողոքները:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր




	Ստորաբաժանում	2021 օգոստոս	2022 օգոստոս	
Առևտրային	Շնդամենը	11739	12604	7.37%
	Երևան	9288	9888	6.46%
	Մարզեր	2451	2716	10.81%
Շահագործում	Շահագործում	30199	29499	-2.32%
	Երևան	19217	20769	8.08%
	Արաբկիր	4691	3613	-22.98%
	Քանաքեռ-Զեյթուն	3198	1752	-45.22%
	Մաշտոց	1941	3490	79.80%
	Շահումյան	1914	2624	37.10%
	Շենգավիթ	1671	2225	33.15%
	Կենտրոն	2344	3498	49.23%
	Հյուսիս/Ավան Խոր Խորք/	1934	1731	-10.50%
	Էրեբունի	1524	1836	20.47%
	այդ թվում կոյուղու վթար	59	134	127.12%
	այդ թվում դիտահորի խցանում	2335	4256	82.27%
	ՄԱՐԶԵՐ	9219	8730	-5.30%
	Հայրավ	3501	4006	14.45%
	Հյուսիս	5718	4724	-17.40%
	այդ թվում կոյուղու վթար	91	60	-34.07%
	այդ թվում դիտահորի խցանում	3198	2744	-14.20%
Շնդամենը	41938	42103	0.39%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Օգոստոսը ավանդաբար տարվա ամենալարված ամիսն է ՎեոլիաԹիմի աշխատանքում, քանի որ սպառումը հասնում է առավելագույն մակարդակի: Դրա համար էլ ընկերության մյուս ծառայությունների նման Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ առաջնահերթ ուշադրություն է դարձրել ջրամատակարարման խնդիրներին:



Հանրությանն է ներկայացվել ինչպես մատակարարվող ջրաքանակի ավելացման, այնպես էլ ջրի արդյունավետ օգտագործման, ապօրինությունների դեմ պայքարի ու վթարների արագ վերացման ուղղությամբ ընթացիկ և հեռանկարային աշխատանքները, ուղղված կայուն ջրամատակարարում ապահովելուն:

Այսպես, հաշվետու ամսին անդրադարձ է կատարվել Վեոլիա քաղաքը սնուցող Ջերմանիսի աղբյուրում կատարված աշխատանքներին, որտեղ Վեոլիայի շահագործման ու տեխնիկական տնօրինությունների ղեկավարները ուսումնասիրություն են կատարել նոր կապտաժների կառուցման ու եղածների վերակառուցման հնարավորության հարցով: Այցի արդյունքում մշակվել է համապատասխան ծրագիր, հատկացվել են ֆինանսական միջոցներ, շինտեխնիկա, մասնագետներ, որոնք ի վերջո կարողացել են վայրկյանում 5-6 լիտրով ավելացնել քաղաքին տրվող ջրաքանակը ու դրա հաշվին երկարացնել Վեոլիա ջրամատակարարման ժամանակացույցը մեկ ժամով:

Ապօրինությունների դեմ պայքարի մասին են վկայել Գառնիի Բանավան, Աջափնյակի Նազարբեկյան թաղամասերում, Կոտայքի Արգել գյուղում, մի շարք այլ վայրերում հայտնաբերված ու ապամոնտաժված ջրագծերը: Սակայն ամենամեծ ուշադրությունը դարձվել է բաշխիչ ցանցի զարգացմանը: «Ներդրումային ծրագրեր Երևանում և մարզերում» խորագրի ներքո 3 հրապարակում է ապահովվել Երևանի Նոյ թաղամասում և Աջափնյակի որոշ հատվածներում նոր ջրագծերի կառուցման կամ հների վերակառուցման, Դիլիջանի ԶՄԿ-ի «Բլրան» գետային ջրընդունիչների նորոգման մասին, որոնք իրականացվել են Վեոլիա Ջուր ընկերության ընթացիկ տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում:

Նաև ՎեոլիաԹիմի սեփական ուժերով իրականացվող ծրագրերին է անդրադարձ կատարվել. Սոլակում, Միսիանում, Ծաղկաձորում, Այնթափում, Մեղրիում: Բնչպեսև տեղի «Զվար» ջրի մաքրման կայանում, որտեղ հնարավոր է դարձել գետային ընդունիչներից ստացվող ջուրը հընթացս մաքրել ու տալ բաշխիչ ցանց: Իսկ «Լեռնապատ» ջրահավաքում, որտեղից ջուր է ստանում Վանաձորի սպառողների 30%-ը, 1135 գծամետր նոր մոնտաժված ջրագծի շնորհիվ կառույցը սկսել է լիարժեք աշխատել:

Սակայն հիմնական թեման մայրուղային ջրատարների վրա առկա խնդիրներն են եղել: Այսպես, լուսաբանվել է Ամբերդի ձորում Էջմիածին քաղաքն ու հարակից գյուղերը սնող 600 մմ ջրատարի վթարի վերացումը վայրկյանում 40 լիտր ջրակորստով, վաղուց իր դարն ապրած «Արարատյան 2 – Նորաբացի ՕԿՁ» 1550 մետրանոց խողովակաշարի փոխարեն նորի կառուցումը Մասիս քաղաքի և տարածաշրջանի 14 գյուղի 4400 բաժանորդի համար, «Արգնի 2 – Երևան» ջրատարի 210 մետրանոց շրջանցող հատվածի կառուցումը Արաբկիրի Կորեայի ձոր կոչվող վայրում: Ընդ որում, հաշվի առնելով վերջինիս հանրային հնչեղությունը, գործում ներգրավվել է Հանրային հեռուստատվիքի «Լուրեր» լրատվական ծրագրի:

Բնչ վերաբերվում է վթարների վերացման արդյունքներին, ապա այստեղ սպառողների համար շատ կարևոր և համոզիչ են ամփոփ տվյալները, որոնք հրապարակվում են ժամանակ առ ժամանակ: Այսպես, օգոստոսին ներկայացվել է հունվար-հուլիս ամիսների արդյունքները, որոնց համաձայն այդ ընթացքում խողովակափնտրիչով, կորեյաստորով, ակվաֆոնով





սպասարկվող 380 բնակավայրերի բաշխիչ ցանցում և մայրուղային ջրատարների հետագոտության արդյունքում հայտնաբերվել է 396 «թաքնված» վթար, որոնց վերացման շնորհիվ կանխվել է վայրկյանում 970 լիտր ջրի կորուստ: Նույնը վերաբերում է ապօրինի ջրօգտագործմանը: Ամփոփ տվյալներով անցած 7 ամիսներին հայտնաբերվել է 1550 ապօրինի միացում և 600 շրջանցող ջրագիծ: Ընդհանուր առմամբ՝ 2150 խախտում 1,6 մլն իւ/մ ծավալով: Այս 2 հաղորդագրությունն էլ հանրությանը մատուցվել է լուսանկարաշարով և համապատասխան ձևավորմամբ՝ մատչելի ընկալման համար:

Ավելին, նախորդ ամիսների նման ապահովել է հրապարակույթների մատուցման ձևերի և միջոցների բազմազանությունը ու աշխատանքների ընդարձակ աշխարհագրությունը, որպես ամբողջ Հայաստանում գործող ընկերություն: Լուսանկարներ, լուսանկարաշարեր, տեսանյութեր, ինֆոգրաֆիկա. արվել է հնարավորինս ամեն առանձին թեմա հանրությանը ներկայացնելու լավագույն ձևը գտնելու համար:


Դրանից բացի, հնարավորության պարագայում մի քանի անդրադարձ է կատարվել թեմային: Նախ ազդարարվել է տվյալ ներդրումային ծրագրի կամ աշխատանքի օրակարգում գտնվելու մասին, այնուհետև դրա մեկնարկի կամ ընթացքի, ի վերջո՝ ավարտի մասին: Նպատակը մեկն է եղել. ցույց տալ սպառողին, որ նրան հուզող խնդիրները մշտապես ընկերության տնօրինության ուշադրության ներքո են և աստիճանաբար լուծվում են: Նման որոշակիությունը ընդհանրապես հույս է ներշնչում հանրությանը և կառուցողական տրամադրում, ինչն իր հերթին թույլ է տալիս Վեոլիա Թիմին համակարգված աշխատել առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

Դրա օրինակ է «Արարատյան 2 - Նորաբացի ՕԿՁ» նոր մայրուղային ջրատարի կառուցումը, «Արզնի 2 - Երևան» մայրուղային ջրատարի շրջանցիկ հատվածի կառուցումը, Երևանի Նոյ թաղամասում և Աջափնյակում բաշխիչ ցանցի վերակառուցումը, Ջերմանիսի աղբյուրում նոր կապտածների կառուցումը:

Ջրամատակարարման խնդիրների ակտիվ լուսաբանումը օգոստոսին ևս մեկ նպատակ ուներ. նախատեսվում էր մատուցվող ծառայությունների սակագների հերթական հայտը ներկայացնել ՀՀ ՀՕԿՀ-ին: Դրանով պայմանավորված, մի քանի անգամ անդրադարձ է կատարվել հանրությանն առավել հուզող հարցերին, այդ թվում խմելու ջրի որակին: Մասնավորապես, ի պատասխան Էրեբունիում հնչող բողոքների, տնօրինության հանձնարարությամբ Հանրային հեռուստատեսության միջոցով հաղորդում է կազմակերպվել Արարատյան պոմպակայանից մատակարարվող ջրի որակի վերաբերյալ:

Ցանկանալով հավաստիացնել, որ Վեոլիան մշտապես հավատարիմ է իր առաքելությանը որպես սպասարկման ոլորտի ընկերություն և ակտիվորեն աշխատում է տարբեր կառույցների, առաջին հերթին տեղական ինքնակառավարման մարմինների, հետո՝ սպառողներին հուզող խնդիրների լուծման ուղղությամբ, ՀԿԲ-ն «Օրագիրն իրականացվում է Վեոլիայի օգնությամբ» խորագրի ներքո օգոստոսին ներկայացրել է հերթական աշխատանքը՝ Դավթաշեն վարչական շրջանի աշխատակազմի հետ համատեղ Դավթաշենի 1-ին թաղամասում կոյուղու կառուցումը:

Հրապարակույթների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ բաժինը (որակավորման հանձնաժողով), հիմք ընդունելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02 Լ հրամանի պահանջները, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի օգոստոսի 15-ի թիվ 4676 Ա հրամանի հիման վրա՝ Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի թվով 43 քլորի օպերատորի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած ստորև ներկայացվող մասնագիտական որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում:

● «Քլորակայանի օպերատորի և քլոր տեղափոխող մեքենայի վարորդի» որակավորման առկա դասընթաց/գիտելիքների ստուգում,

● Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները առկա դասընթաց:

● «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց:



● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Ընկերության Շահագործման տեղամասերի աշխատողների աշխատանքային պարտականությունների անվտանգ կազմակերպման և իրականացման մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ», «Աշխատանքներ փակ տարածքներում», «Աշխատանքներ բարձրության վրա» և «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտների պահանջներով, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 4777 Ա հրամանի հիման վրա՝ Ընկերության Երևան շահագործման տնօրինության թվով 78 բանվորի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

● Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,


● Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,

● Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,

● Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց:



2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 2 քլորակայանում, 10 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 8 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ՔԼՈՐԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում Բաժինը, ելնելով համակարգերում շահագործվող ճնշման տակ աշխատող անոթների՝ քլորի բալոնների, կոնտեյներների անվտանգ շահագործման անհրաժեշտությունից, Տեխնիկական տնօրինության Ք և ԽՋՄԿ Ծառայության հետ համատեղ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված լաբորատորիայում, կազմակերպեց ճնշման տակ աշխատող թվով 5 կոնտեյների ճնշափորձարկման, վկայագրման և ներկման աշխատանքները:

5.4. ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, սույն թվականի օգոստոս ամսվա ընթացքում մշակեց Ընկերության համապատասխան պաշտոն զբաղեցնող բժշկական զննության մասնակիցների ցանկերը և պլան-ժամանակացույցերը, ինչպես նաև վերոգրյալ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան բժշկական զննություններ և հետազոտություններ իրականացնելու լիցենզիա ունեցող բժշկական կենտրոնում կազմակերպեց շուրջ 730 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակաբուժային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննություններ և լաբորատոր հետազոտություններ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Օգուտոս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են համակարգիչների վերաբաշխման աշխատանքներ:
- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգության ուղղված քաղաքականություն կապված Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Մի շարք կիբերանվտանգության սարք սարքավորումներ են ձեռք բերվել Գրուպի կողմից կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Ձեռք են բերվել և ներդրվել են մի շարք կիբերանվտանգության համակարգեր:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 350-400 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 600 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Օգուտոս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված ՀՕԿՀ ծանուցումների ժամկետների պահպանման ուղղությամբ
- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	14	3.8	0.8
Էրեբունի	32	19.5	3.8
Շենգավիթ	21	9.7	1.8
Կենտրոն	11	5.2	1.0
Արաբկիր	9	4.1	0.8
Մաշտոց	19	10.8	2.1
Շահումյան	13	6.9	1.3
Եղվարդ	12	3.7	0.7
Քանաքեռ-Զեյթուն	22	7.2	1.4
ԱԿԲ	71	53.0	9.8
Լոռի	8	26.7	4.6
Շիրակ	19	10.4	1.8
Արթիկ	6	2.3	0.4
Արարատ	31	4.1	0.7
Աբովյան	27	13.9	2.5
Հրազդան	21	7.7	1.4
Ալավերդի	1	0.1	0.0
Արտաշատ	34	5.4	0.9
Գավառ	5	3.0	0.5
Եղեգնաձոր	5	2.6	0.4
Էջմիածին	9	3.3	0.6
Թային	2	0.6	0.1
Իջևան	12	1.0	0.2
Կապան	4	16.2	3.2
Ճամբարակ	1	0.1	0.0
Մասիս	13	5.9	1.0
Մեղրի	1	0.5	0.1
Արմավիր	2	0.4	0.1
Զեյթուն	2	0.5	0.1
Սևան	8	1.9	0.3
Աշտարակ	6	1.7	0.3
Չարենցավան	33	17.0	2.9
Սիսիան	5	2.6	0.5
Սպիտակ	2	0.3	0.0
Ստեփանավան	9	3.6	0.7
Ընդամենը	490	255.6	46.9

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուսիս	10	3.39	11	0.58
Էրեբունի	24	12.79	35	0.42
Շենգավիթ	18	70.01	31	0.52
Կենտրոն	10	3.80	17	0.22
Արաբկիր	7	1.83	16	0.21
Մաշտոց	29	14.68	70	0.33
Շահումյան	24	7.62	77	0.37
Եղվարդ	4	1.99	8	0.11
Քանաքեռ-Զեյթուն	7	2.44	10	0.09
Լոռի	19	9.25	86	0.43
Շիրակ	22	5.86	73	0.59
Արթիկ	7	2.49	32	1.19
Արարատ	2	0.19	17	0.11
Աբովյան	6	3.52	27	0.46
Յրազդան	54	18.77	45	0.20
Ալավերդի	1	0.26	14	0.12
Աշոցք	1	0.24	8	0.03
Ապարան	5	1.37	6	0.09
Արտաշատ	1	0.09	21	0.32
Բերդ	2	0.32	13	0.11
Գավառ	8	3.34	31	0.26
Գորիս	8	3.61	43	0.24
Դիլիջան	1	0.24	2	0.01
Եղեգնաձոր	1	0.52	4	0.02
Էջմիածին	2	3.11	11	0.12
Թալին	2	0.60	3	1.96
Իջևան	3	0.24	9	0.04
Կապան	3	2.06	7	0.10
Մասիս	23	12.05	65	0.63
Մարտունի		-	3	0.01
Մեղրի		-	7	0.37
Նոյեմբերյան		-	1	0.00
Արմավիր	3	1.23	17	0.09
Ջերմուկ	1	0.26	4	0.01
Սևան	5	2.76	9	0.02
Վայք		-	2	0.01
Աշտարակ	5	9.69	13	1.60
Զարենցավան	10	24.69	53	0.40
Սիսիան	5	2.58	19	0.31
Սպիտակ	3	0.30	13	0.06
Ստեփանավան	6	4.12	20	0.22
Տաշիր	1	0.52	5	0.02
Ընդամենը	343	232.83	958	13.02



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսյանի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am